



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

« 06 » 03 2020թ N^o 340-Ն

«ԳՈՒԴՈՒԵՅ ՊԼՅՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ
ՀԱՐԳՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՈՒՄ» ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ
ԶԲԱՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 7-րդ և 13-րդ մասերով,
ինչպես նաև հիմք ընդունելով «ԳՈՒԴՈՒԵՅ ՊԼՅՈՒՍ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության կողմից 2020 թվականի մարտի 4-ին ներկայացված
դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԳՈՒԴՈՒԵՅ ՊԼՅՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
կողմից իրականացվող «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և
հարգադրոշում» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը
դադարեցնել՝ համաձայն «ԳՈՒԴՈՒԵՅ ՊԼՅՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության կողմից ներկայացված դիմումի, հաշվառման համարը՝ ՀՀ19 առ 04.03.2019թ.,
գտնվելու և գործունեության իրականացման վայրերը՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք,
Մ.Խորենացի 27 շենք թիվ 98 տարածք:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:



ՏԻԳՐԱՆ ԽԱՂԱՏՐՅԱՆ